

Ս. ՓԻԿԻՉ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ԵԿԵՂԵՑԻ, ՈՒՍՏՐԻ



ARMENIAN CHURCH OF OUR SAVIOUR

87 SALISBURY STREET
WORCESTER, MASS. 01609

TEL. 756-2931

PARISH COUNCIL

Փետրուար 11, 1970

Գերաշնորհ
Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեան
Առաջնորդ Հայոց Ամերիկայի,
Նիւ Եորք, Ն.Ե.

Սիրելի Սրբազան,

Առաջնորդարանի հարցարան տեղեկագրին հետ ներփակ կը գտնէք նաեւ ընդհանուր տարեկան տեղեկագիրներու պրակը, որ հովուին, ծխական խորհուրդի գործունէութեան եւ ելմտական, վերստուգիչ յանձնախումբի եւ 1970-ի պիւտճէին հետ, միանգամայն կը պարունակէ բոլոր կազմակերպութիւններու տարեկան տեղեկագիրները. բաց աստի նաեւ տարեկան ծխական ժողովի վաւերացուած ատենագրութիւնը, ուր արձանագրուած են ծխական խորհուրդի մասնակի, վերստուգիչ եւ ընտրողական յանձնախումբերու ընտրութեանց արդիւնքը, ստացուած քուէներով, ինչպէս նաեւ ծխական ժողովի երկու որոշումները, որոնք կը վերաբերին 'մշակոյթ' միակ օրակարգով բացառիկ ծխական ժողովի մը գումարման եւ տարեկան ծխական ժողովի թուականի փոփոխութեան, որ յանձնուած է ծխական խորհուրդի ուսումնասիրութեան:

Ծխական խորհուրդի ընտրուած անդամներն են Ջարլըս Կարապետեան, Եղուարդ Պիլէզէրեան, Կիլպըրտ Մարգարեան, Փիթըր Նալպանտեան, Լէօն Խաչատուրեան եւ Ճան Պալեան, իսկ փոխանորդ Վահէ Ճարտարեան:

Ձայսոսիկ հաղորդելով, կը խնդրենք Ձերը Սրբազնութենէն անոնց վաւերացումը:

Մաղթելով յաջողութիւն, մնամ

Եղբայրական սիրոյ ողջունիւ
արօթակից
Միւռոն Ս. Վրդ. Կրճիկեան

Միւռոն Ս. Վրդ. Կրճիկեան
հոգեւոր հովիւ